ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2

ք. Երևան

<< 19 >> մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տեղանք>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Սահակյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կադաստրային քարտեզագրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 89336125 (ութսունինը միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրակացվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**Կատարող**
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Տեղանք»ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	ք.Հրազդան, Կենտրոն 4/1
հ/հ 900013220042	«Կոնվերս բանկ»ՓԲԸ
ՀՀ ֆինանսական վարչություն	Հ/Հ 19300586592000
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 03019493
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Գ. Հասրաթյան _____	Ա.Սահակյան _____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժիններ 1-3

Հայաստանի Հանրապետության ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ, Ագարակ, Գեղարոտ, ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան, ՀՀ Կոտայքի մարզի Վ. Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի

համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքների

1. Քարտեզագրման ենթակա համայնքների անվանումները՝ Վերին Սասունիկ, Ագարակ, Գեղարոտ, ք. Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան, Վ. Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի:

2. Աշխատանքների նպատակը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ, Ագարակ, Գեղարոտ, ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան, ՀՀ Կոտայքի մարզի Վ. Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքների թարմացում, ընդ որում՝

Հհ	Համայնքի անվանումը	Չափման միավորը	Քանակը
Չափաբաժին 1 ՀՀ Արագածոտնի մարզ			
6	Վերին Սասունիկ	հա	2814,40
7	Ագարակ	հա	570,41
8	Գեղարոտ	հա	1478,95
Չափաբաժին 2 ՀՀ Գեղարքունիքի մարզ			
9	ք. Գավառ / Հացառատ թաղամաս/	հա	5100,00
10	Ակունք		9867,00
11	Գեղամավան	հա	3128,37
Չափաբաժին 3 ՀՀ Կոտայքի մարզ			
12	Վերին Պտղնի	հա	146,97
13	Բալահովիտ	հա	522,99
14	Քարաշամբ	հա	1065,70
15	Մայակովսկի	հա	976,51
	Ընդամենը	հա	***25671.3***

3. Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման եղանակները և ճշտության նկատմամբ առաջադրվող պահանջները տրված են «Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման հրահանգ»-ում.
4. Ելակետային պետական գեոդեզիական և նախկինում ստեղծված Հանութային ցանցի կոորդինատները, կադաստրային քարտեզները ձեռք են բերվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.
5. Նախատեսվող աշխատանքներ.
ա) տարածքի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում հանութային ցանցի խտացում,

բ) օբյեկտի սահմաններում գտնվող գեոդեզիական կետերի արտաքին տեսքի թարմացում (ներկում, ակոսիկների փորում) և ֆոտոլուսանկարահանում,

գ) համայնքների բնակավայրի տարածքների կադաստրային քարտեզագրումը կատարվում է 1:500-1:1000 մասշտաբով: Մասշտաբը ընտրվում է՝ հաշվի առնելով կառուցապատման խտությունը և քարտեզների վրա պատկերի արտահայտման ճշտության պահանջները:

դ) համայնքների բնակավայրի տարածքի սահմանից դուրս գտնվող տարածքների կադաստրային քարտեզագրումը կատարվում է 1:2000 մասշտաբով՝ սեփականաշնորհված հողերի դեպքում և 1:5000 մասշտաբով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի դեպքում:

ե) թարմացված կադաստրային քարտեզների թվայնացում:

6. Կադաստրային հանույթների ճշտության նկատմամբ առաջադրվող պահանջներն են՝

ա) 1:500-1:1000 մասշտաբի հանույթի դեպքում պլանային թույլատրելի սխալը համապատասխանաբար չպետք է գերազանցի 0.1մ և 0.2մ,

բ) 1:2000 և 1:5000 մասշտաբի հանույթի դեպքում՝ համապատասխանաբար մինչև 0.40մ և 1.00մ

գ) տարբեր աշխատանքային տարածքների հանույթների կապակցման դեպքում թույլատրելի սխալը չպետք է գերազանցի մասշտաբի 0.3մմ չափը:

7. Կադաստրային քարտեզագրման աշխատանքների ընթացքում հանութագրման ենթակա են նոր և փոփոխված անշարժ գույքի բոլոր միավորները՝ հողամաս, շենքեր, շինություններ՝ անկախ սեփականության ձևից և օգտագործման նպատակից, վերգետնյա և ստորգետնյա մագիստրալային կոմունիկացիոն ցանց, որը կարող է հանդիսանալ սերվիտուտը, ճանապարհները և այլն:

Հանութագրման ենթակա չեն՝ շարժական շինությունները, տաղավարները, ինչպես նաև հասարակական նշանակության բացօթյա շինությունների (սրճարան, կրպակ) շարժական գույք:

Հուշարձանները և ջրավազանները նույնպես հանութագրման ենթակա չեն, սակայն դրանք պատկերվում են սխեմատիկ ձևով՝ առանց չափագրման:

8. Հանութային նյութերի վրա պետք է նշվեն հողատեսքերը և նպատակային նշանակությունը (համաձայն հրահանգով հաստատված պայմանական նշանների):

9. Հանութային նյութերի վրա պետք է նշվեն քարտեզագրվող տարածքում առկա աշխարհագրական օբյեկտներն և նրանց անունները (բլուր, ձոր, լիճ և այլն):

Համայնքի սահմանների հանութագրման աշխատանքները կատարել միայն պատվիրատուի կողմից տրամադրված օրենսդրությամբ սահմանված համայնքի սահմանների նկարագրին համաձայն:

Կադաստրային քարտեզների վրա արտահայտված հաղորդակցուղիների ցանցի փոփոխությունների վերաբերյալ տվյալները պետք է համաձայնեցվեն տվյալ տարածքի համապատասխան ծառայության հետ:

Համայնքի տարածքում կադաստրային քարտեզագրման աշխատանքները սկսելուց առաջ կատարողը պարտավոր է ներկայանալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին:

Կադաստրային քարտեզագրման աշխատանքները պետք է համապատասխանեն «Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման հրահանգ»-ի պահանջներին:

Յուրաքանչյուր հանձնվող Հանութային նյութի (հատակագծի) շրջագիծը պետք է ամփոփի անմիջական քարտեզագրական տեղեկատվություն, որտեղ պետք է նշվեն.

- համայնքի անվանումը,
- կոորդինատային ցանցը իր արժեքներով,
- կատարող ընկերության անվանումը, կնիքը, ամսաթիվը,
- կատարող մասնագետի անուն, ազգանունը և ստորագրությունը:

10. Աշխատանքների ավարտից հետո պետք է հանձնվեն՝

ա) հանձնվող նյութերի ցանկը,

բ) համայնքի կադաստրային թարմացված քարտեզը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

գ) գեոդեզիական խտացման և Հանութային ցանցերի ստեղծման սխեման,

դ) գեոդեզիական հիմքի և Հանութային ցանցի կետերի կոորդինատների հաշվարկման ամփոփագրերը,

ե) գեոդեզիական խտացման հիմքի կետերի կոորդինատների ժողովածուն,

զ) գեոդեզիական հիմքի և խտացման կետերի տեղադրման (կառուցման) ուրվանկարները,

է) թարմացված կետերի արտաքին տեսքի լուսանկարները,

թ) բացատրագիրը:

11. **Աշխատանքների իրականացման ժամանակացույցը ըստ եռամսյակների**

2017 թվականին նախատեսվող աշխատանքների ժամանակացույցն ըստ ծավալների և եռամսյակների տրված է աղյուսակում:

աղյուսակ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	1-ին եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի
			ծավալը	ծավալը	ծավալը	ծավալը
9	ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ, Ագարակ, Գեղարոտ	հա		1705.2	3894.36	4863.76
10	ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան	հա		6344.0	14488.77	18095.37
11	ՀՀ Կոտայքի մարզի Վ. Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի	հա		950.8	2171.6	2712.17
				9000	20554.73	25671.3

Գնման ժամանակացույց
Կադաստրային քարտեզագրման աշխատանքների

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	30.11.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե

Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7

հ/հ 900013220042

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Կատարող

«Տեղանք»ՍՊԸ

ք.Հրազդան, Կենտրոն 4/1

«Կոնվերս բանկ»ՓԲԸ

Հ/Հ 1930058659210100

ՀՎՀՀ 03019493

Տնօրեն

Ա.Սահակյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Կադաստրային քարտեզագրման աշխատանքների

հազար դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների. ընդ որում՝								
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ, Ագարակ և Գեղարոտ համայնքների կադաստրային քարտեզի թարմացման աշխատանքներ	5924.06	5924.06	13540.708	13540.708	13540.708	16925.885	16925.885	16925.885	16925.885
2	ՀՀ Գեղարքունիքի մարզի գ.Գավառ /Հացառատ թաղամաս/, Ակունք, Գեղամավան համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ	22040.16	22040.16	50377.5104	50377.5104	50377.5104	62971.888	62971.888	62971.888	62971.888
3	ՀՀ Կոտայքի մարզի Վ.Պտղնի, Բալահովիտ, Քարաշամբ, Մայակովսկի համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ	3303.423	3303.423	7550.6816	7550.6816	7550.6816	9438.352	9438.352	9438.352	9438.352

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե

Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7

հ/հ 900013220042

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար՝

Կ. Հասրաթյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«Տեղանք»ՍՊԸ

ք.Հրազդան, Կենտրոն 4/1

«Կոնվերս բանկ»ՓԲԸ

Հ/Հ 1930058659210100

ՀՎՀՀ 03019493

Տնօրեն

Լ.Մահակյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԲԱՇՁԲ-17/2 *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն